ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐՏԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ք.Արտաշատ,Օգոստոսի 23,62
Ogostosi 23 str/62, Artashat
Հեռ./ TEL./ 0235/ 2-23-83
010/ 28-02-19
Ֆաքս/ Факс/Fax/2-50-00
Էլ. Փոստ/ E-mail: artashatmeria@bk.ru

Ե -4980
N----------
27 11
<------>> ----------2023թ

Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարար պ-ն
Վահե Հովհաննիսյան

Արտաշատի համայնքապետարանի և «Մար-Մոս» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 2023 թվականի սեպտեմբերի 14-ին կնքված «ԱՄԱՀ-ԷԱՃԾՁԲ-23/69» ծածկագրով ծառայությունների մատուցման գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Արտաշատ համայնքի համայնքային սեփականություն համարվող գույքի գույքագրման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջների:

Արտաշատի համայնքապետարանի աշխատակազմի կողմից Պայմանագրով պատվիրատուին վերապահված իրավունքների և պարտականությունների իրացման արդյունքում պարզվել է, որ կատարողի կողմից չեն պահպանվել Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածի Տեխնիկական բնութագրով սահմանված ծառայությունների մատուցման պահանջները:

Ընկերությունը խախտելով Պայմանագրով սահմանված պարտավորությունները չի մատուցել Պայմանագրով նախատեսված ծառայությունները:

Արտաշատի համայնքապետարանը՝ ղեկավարվելով գնումների մասին օրենսդրությամբ, ինչպես նաև Պայմանագրի 2.1.3-րդ կետի «բ» ենթակետի պահանջով՝ միակողմանի /ամբողջությամբ/ լուծել է կնքված Պայմանագիրը: Պայմանագրի լուծման վերաբերյալ ծանուցումը հրապարակվել է տեղեկագրում սույն թվականի նոյեմբերի 15-ին և պայմանագիրը նոյեմբերի 15-ի դրությամբ համարվել է լուծված:

Հիմք ընդունելով ՀՀ «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա/ ենթակետի և 2-րդ մասի պահանջները՝ Պատվիրատուն որոշում է, որ «Մար-Մոս» ՍՊԸ-ին անհրաժեշտ է ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ներկայացնում ենք «Մար-Մոս» ՍՊԸ -ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ աղյուսակը՝

Մասնակցի						
անվանումը	ՀՎՀՀ /ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը/	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
«Մար-Մոս» ՍՊԸ	06934168	ք. Վանաձոր, Մխիթար Գոշի 7		«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետ		27 նոյեմբեր 2023թ թիվ Ա-5164 որոշում «ԱՄԱՀ-ԷԱՃԾՁԲ-23/69»

Առդիր էլեկտրոնային 106 թերթ:

Համայնքի ղեկավար՝ Կառլեն Մկրտչյան

Կատարող Զարուհի Ղազարյան
Հեռ 093-60-34-02